«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2014 թվականի

Ամփոփիչ ատեստավորման մասին

Լսելով և քննարկելով **«Ամփոփիչ ատեստավորման մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերում հանել ամփոփիչ քննությունը և ավարտական աշխատանքը բոլոր ուսանողների համար դարձնել պարտադիր. ավարտական աշխատանքին հատկացնել 18 կրեդիտ:

2. Հանձնարարել ուսումնամեթոդական խորհրդին՝ լրամշակել և սեպտեմբերին հաստատման ներկայացնել «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության կազմակերպման կարգը»:

3. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 29-ի «Ուսումնական պլանի նորմատիվներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման 2-րդ կետը և 2014 թվականի մայիսի 7-ի «Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանք գրելու թույլտվության ստորին շեմ սահմանելու մասին» որոշումը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014-2015 ուսումնական տարվանից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

23.06.2014 թ.